ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2023-8-1-Ա

ք. Երևան 24.08.2023թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2023 թվականի օգոստոսի 24-ի նիստում քննարկեց 2023 թվականի մարտի 22-ին արտոնագրային հավատարմատար Զարուհի Մանուկյանի կողմից ներկայացված British American Tobacco (Brands) Limited ընկերության (Globe House, 4 Temple Place London WC2R 2PG, GB) «KBio» (IR1613710) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 3-րդ կետերի և ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի N 1017-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի (այսուհետ՝ Կարգ) 93-րդ կետի 2-րդ, 3-րդ ենթակետերի համաձայն որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը չունի տարբերակիչ հատկություն, օրինակ, սոսկ պարզ երկրաչափական պատկերներից, գծերից, ինչպես նաև դրանց զուգակցումից բաղկացած նիշերը, որոնց համակցությունը չի տալիս դրա մեջ մտնող տարրերի ընկալումից տարբերվող ընկալման այլ որակական մակարդակ, կամ բաղկացած են գրաֆիկական յուրահատուկ ոճ չունեցող առանձին տառերից, թվերից, որպես բառ չընկալվող տառերի զուգակցումից և բացառապես բաղկացած է այնպիսի նշումներից, որոնք առևտրում ծառայում են ապրանքի արտադրության կամ ծառայության մատուցման ժամանակը, ապրանքի կամ ծառայության տեսակը, որակը, քանակը, ստեղծման նպատակը, արժեքը, աշխարհագրական ծագումը կամ ապրանքների և (կամ) ծառայությունների այլ բնութագրեր նշելու համար: Տվյալ դեպքում հայտարկված ապրանքային նշանը չունի տարբերակիչ հատկություն, քանի որ բաղկացած է յուրահատուկ ոճ չունեցող «K» տառից և «Bio» (bio-biological՝ կենսաբանական, բիոլոգիական) գրառումից, որը հանդիսանում է նկարագրական բնույթի տարր, իսկ ինչ վերաբերում է պատկերային մասին, ապա վերջինիս համակցությունը վերոնշյալ

տարրերի հետ չի հաղորդում այդ տարրերի ընկալումից տարբերվող ընկալման այլ որակական մակարդակ:

Կոլեգիայի անդամը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց կոլեգիայի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը բավարարելու, փորձաքննության որոշումը չեղյալ ճանաչելու և ապրանքային նշանին իրավական պահպանություն տալու մասին, քանի որ ապրանքային նշանի գրանցումը խնդրարկվում է վակցինայի արտադրության համար և դրա գրանցումը չի սահմանափակի մյուս հայտատուների իրավունքները, եթե նշանի մեջ մտնող «Bio» բառին իրավական պահպանություն չտրամադրվի: Բողոքարկման խորհրդի անդամները ևս համաձայնվեցին:

Բողոքարկողը համաձայն էր կոլեգիայի նախնական քննարկման արդյունքների հետ

Փորձաքննության բաժնի պետը նույնպես համաձայնվեց կոլեգիայի նախնական քննարկման արդյունքների հետ:

Ամփոփելով ընդհանուր քննարկումը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2022 թվականի մայիսի 6-ի N774-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհրդում բողոքների, դիմումների և առարկությունների քննարկման կարգի» 70-րդ կետի 1-ին ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը քվեարկության արդյունքում միաձայն.

Ո Ր Ո Շ Ե Ց

Արտոնագրային հավատարմատար Զարուհի Մանուկյանի կողմից ներկայացված British American Tobacco (Brands) Limited ընկերության «KBio» (IR1613710) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը բավարարել, փորձաքննության որոշումը չեղյալ ճանաչել՝ «Bio» բառին իրավական պահպանություն չտրամադրելով:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ՌԱՖԱՅԵԼ ԳԵՎՈՐԳՅԱՆ